Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հոկտեմբերի 2010թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի դուստր Անահիտ Եղիշեի Չարենցին Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 28-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականությունը համարվող Երևանի Խորենացու փողոցի թիվ 6 շենքի հ.8 մեկսենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 02.07.2004թ. հ.1459714 վկայական) սեփականության իրավունքով անհատույց /նվիրատվությամբ/ օտարել Եղիշե Չարենցի դուստր Անահիտ Եղիշեի Չարենցին (անձնագիր՝ AG0296855 տրված 20.05.2004թ. 002-ի կողմից):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 22.04.2004թվականի h.518-Ա որոշման հիման վրա Երևանի քաղաքապետարանի կողմից գնվել է Մ. Խորենացու փողոցի թիվ 6 շենքի h. 8 բնակարանը՝ հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի դուստր Անահիտ Չարենցին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու նպատակով:

Երևանի քաղաքապետարանի և Անահիտ Չարենցի միջև կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որը ենթարկվել է պետական գրանցման 07.10.2004 թվականին:

Հաշվի առնելով, որ Անահիտ Եղիշեի Չարենցը Երևան քաղաքում որևէ բնակելի տարածության նկատմամբ չունի սեփականության իրավունք և ներկայումս փաստացի բնակվում է Երևանի Խորենացու փողոցի թիվ 6 շենքի h.8 մեկսենյականոց բնակարանում, նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ հայ մեծանուն բանաստեղծի դուստր Անահիտ Եղիշեի Չարենցին բնակարան անհատույց օտարելու մասին:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանը անհատույց օտարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ